



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հովհաննէս Երուզ

ՍԻԱՍՄԱՆԹՈ
ԽՁԵԶԱՐԵ



ՊԵՏՅՐԱՍ

Յիս. խմբագիր՝ Յանուս Խաչվանյան
Սրբազրիյ՝ Սուրեն Բարյան



Գեորգիայի տպարան
Դրամվեր Պ 270. Գառվեր Պ 000
Հրատ. 2407. Տիրամ 2000



Ն Ա Ն Ե Ր Գ Ա Ն Ք

Իմ հույզերի կափից շինված հողուս՝ վռսկե սափորով
 ժողովրդի զուլալ սրտից, պազ ջուր առա ջերմ սիրով:

Աչքս բացվեց շուշանի պես ու աստղերով այս դիշեր,
 Լցվեց անհուն յերկինքն հողուս սիրտս դարձավ մի ձով սեր:

Միամանթոն այցի յեկափ, իննեղարեն՝ յերկուսով
 Հավերի հետ կուրծքս մտան իմ աչքերի դարպասով:

Ու մինչ Միփան սարից բացվող արշալույսը սպիտակ,
 Իննով թաս եր հողիս դասել, քեֆ եր ջահել կրծքիս տակ:

Միրտս եր թնդում մեր հոյաշեն աշխարհի հետ իմաստուն
 Յեղ խնդության ցողը աչքից՝ սրտիս ծաղիլին և նստում:

Բայց մի մուլլ տկնթարթով նորից բացվեց իմ աչքին,
 Արցունքով լի ամպի նման հավետ հանդած աշխարհն էին:

Ասես բոլոր ծաղիկները սրտիս վրա չորացան—
 Ու յես ընկա հին վշտերի փշերով լի մի կածան.—

Ուր վարդի պես սերն եր թռչնում ու սուրբ վաստակն հնձվորի՝
Կյանքն եր նման չար գերանդու բերանն ընկած մի լորի՝

Ու շոր հողի կրծքին ընկած յերկու կաթիլ ջրի պես՝
Սիամանթոն, Խճեզարեն անցան տխուր ու անաս։

Ու վիրավոր մի հավքի պես հոգիս կպած իմ սրտին
Ուրախ աչքով տխուր նայեց անցած ու հին աշխարհքին։

Ու թաց աչքով յ'ըզեց նրանց տխուր սերը, վոր մեռավ,
Բայց հույզերում իմ լուսարուխ տհա նորից կյանք առավ։

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Է

Արիւնքն սարի գլուխն արծաթ ահա վոսկու վանյլ առաջ,
Արեն ելալ ձախից զվարթ՝ դեպի յերկիւնք քանյլ արաւ:
Ձարերի մեջ մտտախուզը հոգմի թևովն հանց գերի,
Որսրվելոյ յոչնախ՝ գնաց կատարներին լեռների:
Գլուզերն ամեն ձխի ամպով, ձիւ թամբով հանդ յելան,
Սրտմանթան վոչխարի հետ յելալ սարերն, յեկալ ման:
Ու քիչ հետո, աղբյուրի մտա, բազմեց ժայռին՝ թիկունքով:
Արինդն անեց ու հաղաքեց շար դառներին իրար քով:
...Գուրգուրում եր դեմքը նրա շուայլ արիւնն նորածաղ,
Ծերպ ու հովիտ ձաղիկ հաղած բուրում եյին վոսքի տակ:
Ու ահագին ժայռի տակից մի աղբյուր եր դուրս թռչում
Արծաթափայլ խաղ ու շաղսլ գույզ ամերին կարկաչուն:
Այդ աղբյուրից ամեն կանուխ ու վոսկեշող առաւոտ
Ջուր են առնում աղջիկները, խաղ են կանչում նրա մտ:

Ջուր են տանում իրենց շինած ու ծաղկազարդ կժերով,
Ու ջրի հետ համբույր յարին՝ նուշ ու խնձոր թշերով:
Այդ աղբյուրն և դաշտը աղատ, ուր տեսնում են մեկ մեկու
Աղջիկ-տղա, ում բոց սերն և արեզի սկես տերն հոգուս
Դրա համար ջրի վրա կախված ժայռը ծաղկավետ
Սուրբ և կոչվում կարկաշատս լույս աղբյուրի դանգի հետ:
Ու գալիս են ջուր են տանում նրանք դյուղից մոտակա,
Յեղ աղբյուրն և միշտ գողանում անուշ ծիծաղն աղջկա:

3

Միամանթոն՝ ճակատն հպարտ՝ վրեն հոնքի թրեր թուխ,
Վորոնց տակից շողողում են աչքերն անահ, լուսաբուխ:
Դյուղի տերերն իր հասակին նայում են միշտ նախանձով,
Կարոտով են աղջիկները մնում նրա աչքին ծով:
Ընկերները անտառ կեչու, ինքն անտառում մի կաղնի,
Վորից ամպի կայծակն անգամ ահից հեռու կլիախնի:
Իրենց դյուղի հարուստ բեկի հակա հոտն և պահում նա,
Ջահել կրծքում բուն և դրել ասես արծիվն առանց ահ:
Ու թիկն արած իր հին ընկեր ժայռի վրա ծաղկավետ
Հովին ավեց տաղերն իրա սրինգն առած շնչի հետ:

— Եթածում չունեմ վոչ մի բան,
Վոչ տուն, վոչ շեն, վոչ կթան,
Հե՛, ջան Սարեր Սիփանի,
Դուք եք ճամբեն իմ նոր տան:
Մեն մենակ եմ ձեզ նման
Յերկնի տակ եմ ձեզ նման
Դեռ չեմ սիրել վոչ մեկին,
Ու միակ եմ ձեզ նման:

Վոչխարն հանդիսաւ արածուս եր վրոված կանաչ մի լանջում,
Սերբ նա լսեց վոր մի ձայն ե, ահա իրեն ե կանչում:

Ականջ դրեց ե աչքերում ծնովեց կրակն իր հողու,
Ինչպես սարից նոր դուրս նայող արեղակից՝ շող յերկու:

Ա. ցած նայեց տեսալ մի խումբ ժիր աղջիկներ ժայռի մտա,
Շողոպում են ու ջուր առնում այն աղբյուրից ճիծաղկոտ:

Նրանք չեյին տեսել ժայռին նստած հովիին մեր ջահել,
Ա. սրտարաց յերդում եյին ու զովում սերն անարդել:

Ճամբա կա՝ վոր գյուղ ե տանում,

Ճամբա կա՝ այգի,

Ճամբա կա՝ վոր ծով ե հանում—

Նախակն իմ կյանքի:

Այն ճիւղ եր իմ յերազին

Հաղալ ալ կասան,

Սիրելի եմ վառ մուրազի

Սարն հանող ճամբան:

Ճամբա կա՝ վերն ե հանում

Վար ընկած մարդին,

Ճամբա կա՝ սեր ե տանում

Անմուրազ սրտին:

Քո յարը սարի լալա,

Գու հոգն ես սարի,

Ձի տեսել ամպի քուլա

Աչքը քո յարի:

Ճամբա կա՝ գյուղ ե տանում,

Ճամբա կա՝ այգի,—

Քո սիրո ծովն և հանում

Նամական իմ կյանքին:

Միամանթոն յերզը լսեց, ժայռի վրա շուռ յեկավ,
Ժայռի կողից մի քար պոկվեց ու աղբյուրի մեջ ընկավ:

Աղջիկները վեր նայեցին, տեսան հովվին՝ կատարին,
Ու շիկնելով ամեն մեկը հիշեց սիրած իր յարին:

Նրանց հետ եր Խճեղարեն՝ բեկի դուստրը վարսասաթ,
Ասես աչքի սահորճներով շուրջն էր ցողում լուսնի կաթ:

Լիներ ասես մի վարդենի, թե՛ ծաղկալից դարձան ձոր,
Կուրծքն հասակի ծառից կախված արևելքի դուշ խնձոր:

Հայացքն անուշ, ինչպես շողած մարդուն հասած հով զեփյուռ,
Նա մի վարդ է հոր պալատի փշերի մեջ համասփյուռ:

Ու վեր նայեց Խճեղարեն, ինչպես ծաղիկն արեվին,
Վոր ուղում և իր սլացքով հասնել նրա լույս թեյլին:

Եիկնեց մի պահ մեկ ևլ նայեց տեսավ հովիվ պատանուն,
Միտը խայտաց, ուր առաջին անգամ ծնվեց սերն անհուն:

Ուզեց մեկից մի ծախ պես ընկնել նրա զիրկն ուրախ,
Թուխ աչքերի ծաղիկներում դառնալ սիրո ցող ու շաղ:

Ժայռի վրա Միամանթոն դառավ մի բոց հրդեհի,
Ուզեց իջնել, բոցավառել այն աղջկան դեռատի:

Ու կարծես թե նրա աչքից պոկվեց աստղի պես մի քար
Ընկավ սեղ—ունք այն աղջկա սրտի լինը բոցավառ:

Ու կարծես թե սեղ աղջկա աչքից թռավ մի թիթեռ
Մտավ ջահել հովվի բոցոտ սրտի դաշտը ծաղկաբուռ:

Ու կարծես թե նրանց սրտերն անուշ բոցով հարվեցին
Մի սիրտ դարձան և արյունով ասես իրար ձուլվեցին:

Այդպէս անձայն հայացքներով սերը ծնւից նրանց մեջ՝
Մանկան նման, ժորը շուտով կառնի կաղնու հասակ պերճ։
Ու բարձունքում կակաչի պէս հովիի յերևան եր վաչլում
Ազրյուրի մտա թուխ աղջկա սիրան եր սիրով ալալլում։
Յեղ գյուղ իջան աղջկիները՝ սափորներով իրենց լի։
Սրտերի մեջ սիրտ կրակն, ինչպէս աչքը բլբուլի։
Խնկարեն այն ազրյուրից ջուր առնելը մոռացալ,
Սակայն սրտի կուժը սիրտ դինով լցված տուն դարձալ։
Միամանթան ժայռից լուսնի նման խաղաղ նայեց վար,
Մինչ աղջկիլ սուղից գյուղի մշուշի մեջ համբարար։
Յեղ նա նորից սրինդն ամեց զեփյուռների աղմուկով՝
Մարում ցրված վախտարն իրար գլխի բերեց ջրի քով։

— Ե՛մ ազրյուրից բլբուլ թռալ

Միտքս բացվեց թեզի հետ,
Սրտես մի խուրձ ծաղիկ տարալ,
Աչքս ճամբին դառալ նետ։

Սարի լուսին աչքեր ունի,
Վոր լուչս կուտան գիշերով,
Չորանը քեզ պիտի տանի,
Թեկուզ անցնի փշերով։

Հովեր կուզան սարից, ձորից
Վտախոզ սրտին հովն անուշ,
Չի գցելու ինձ սեղ քարից
Խնկարեն աչքը նուշ։

Սար ու սարեր յես ման յեկա,
Ծաղիկ ծաղիկ նման չեր,
Ծաղիկների շունչը վկա,
Ծաղկից վառ են քո աչքեր։

Իմ աղբյուրից՝ բլրուլ թռար,
Միտքս բացվեց քո թեմով
Սրտիս կոկոն վարդը տռար,
Վառիբ սիրուդ հրդեհով:

••

Յերդը շուրթին, կանաչ սարից Սիամանթոն իջավ գյուղը:
Յերեկոն եր խրճիթների կուռքներից քաշում ծուխ:

■

Վառված, տարված յերկրի սիրով՝ աստղերն իջան՝ խմեն ջուղ-
ձերմակ քողի պես որորվեց լուսնի ժպիտն ամենուր:

Պարզ գիշերն և գյուղի վրա դրել համբույրն իր շուրթով,
Ինչպես լերկու սիրահարի պերճ համբույրներն անվրդուլ:

Ու քնի մեջ սար ու հովիտ, գյուղ ու անակ ու խրճիթ
Որորվում են յերազների յերկինքների մեջ վճիռ:

Աես մի խոր վառ յերազ և դարձել աշխարհն այս պահին:
Յերբ լուսինը նոր և յե՛նում յերկնակամար—իր դահին:

Ու չեն լում աստղերն իջած առվի ձայնը պուրակում,
Աես յերկրի լայն կրճճի տակ և լճի մի սիրտ չի թակում:

Ու թե մի հավք յե՛նի բնից, անցնի անհաս յերկնքով
Ձույգ թեմերի շուկն անգամ մարդ կլսի ջրի քով:

Յե՛վ քուն մտած Խճեղարեն՝ յերազի մեջ աստղային
Գրկում և պիրկ ու համբուրում սարի հովիվ սեզ յարին:

Սիամանթոն՝ յերազ դառած շնչում եր աղջկան,
Ինչպես հովը մեխակների թերթերի մեջ գյուլթական:

Խճեղարեն նրան նայում, խմում աչքի հուր գինին,
Վոխում նրա մատանու հետ իր կուսական մատանին:

Սիրամանթոն՝ խլում ձեռից լույս մատանին աղջկա
Ու ասում ե-ւսրա նման աստղ յերկնքս՝ ել չկա՛:

Խնկարեն նորից գրելում, կարոտանքով համբուրում,
Ու ասում ե «Սիրամանթո, հայրս հովվին չի սիրում»:

Սիրամանթոն սոխակ դառած՝ նրա գեմբի վարդերում
Դեղդեղում ե «Խնկարե՛, կլանքս ե քու թուխ աչքերում»:

Ու թվում ե նրանց թե ջինջ աղբյուրի մոտ յերկուսով
Ծաղիկներէ բույրն են ձծում, սրտերի մեջ սերը ծով:

Ու վոչ մի թեղ, ու վոչ մի վոտ նրանց սաբը չի հասնում,
Վոչ մի բերդից, վոչ մի չար աչք իրենց շուրթը չի տեսնում:

Հովիբ կուգան Սիփան սարից, ծաղիկներից արնաթերթ,
Ու նիրհում են յերազներով ճամբան, սարեր, տուն ու բերդ:

Հարյուր-հազար դանդակների նման աստղներն են գնդում
Շուշանաչող ու լուսալի գարնան յերազ յերկնքում:

Ու գիշերը խրճիթներից հազար շուկ ե բերում՝
«Սիրամանթոն մուրճող ունի, յերազ՝ սրտի ծալքերում»:

Հովիբն առած բուրմունք ու դով՝ խաղում նրանց լերեսին,
Մեկը՝ մի սար, մեկը՝ սարի գոշին նստած մի լուսին:

Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ Գ Լ Ո Ւ Ն

1

Քառասուն անգամ արև ծագեց կռիվ տվեց լուսնի հետ
 Ու վերստին ցուաց Սիփոան սեզ կատարից լուսավետ:
 Միամանթոն խոսեց բեկին, թե ուզում ե ազնկան,
 Թե սիրում ե ազնիկն իրեն, սերն ե անհաղթ քանց մի խան:
 Ու կատաղեց հերն ազնկա, հովիվ կարգեց ուրիշին,
 Միամանթոն իջավ սարից-աչքը սարի մշուշին:
 «Գնձ—ասաց բեկը նրան—իմ աշխարհից հեռացիր,
 Խելքդ մի տա ել ազնկան, վոչխարն անի ցան ու ցիր:
 Մինչ արև-ծագ պետք ե կորչես, վոր չտեսնի գյուղը քեզ,
 Իմ հաճույքից թռած անհայտ վաղուց կորած նետի պես»:

2

Գնաց տխուր Միամանթոն, գնաց ուրիշ մի աշխարհ՝
 Թողած գյուղում կարոտն իրա ու չար բեկի սիրուր քար,—

Վարն ասում են ամեն անգամ յերբ նստում ե ղեյլանի
 - Էջարանն ինչ ե, զոր իմ ասնից մի բուռ զոսկե հող ասանի:
 Իմ աղջիկը յես պիտի տամ շանն ընկի քաջագարմ,
 Վարից ասնեմ հոտեր անթիվ ու ցորենի հողեր իարմ:
 Խնկարեն հորը պրկեց ու խնդրում եր, աղերսում
 Էջայրիկ, ինձ մի մալուխ թողնի, հայրիկ իմ սիրան ե մբում:
 Էջայրիկ, հայրիկ, ձի՞ծեանակի ձաղը բնից մի հանի,
 ԷՄի, սպանի քս աղջկան, յարին մալուխ մի անի:
 Բայց քարի պես, ժեռ քարի պես բեկի սիրտը անզգա,
 Ասես շեր ել ուզում լսել լայն ու մորմոքն աղջկա:
 Ենի աղջիկը յերբ մանում եր աղարանքը իրենց ձոր,
 Մաալլում եր ու բոցի պես սիրան եր մանում մի հին զող:
 Ու հիշում եր սր ու դիշեր ու անանում եր յերագում՝
 Սխամանթանն ե հով գասած իր ականջին փսփսում,
 Ին ասիրելիս, չի մոտանա շնչաղորը արեին,
 Սիրուդ զարզը դեռ չի թռչնել սրտիս կանաչ տերեվին:
 Ենի աղջիկը մոլոր արևուր միշտ ասում եր իր մտքում՝
 Էջի մոտանա յեվ սիրտս քեզ դու ասող հողուս յերկնքում:

3

Ծիծեռնակը յեկավ, դարնան կյանքը բերեց սարերի,
 Ամեն մի շունչ զովքն ե անում, կարոտն ասում իր յարի:
 Նախիրները սարերն յելան, ձուխը յելավ, յայլազում,
 Ու ամեն մի ոճորքի տակ խնոցի յե յերևում:
 Գառն ու մարին արոս յելած՝ խմեցին շողն արեի,
 Ժայտերի մեջ մասրենիներն հագան ձիլեր՝ տերեվի:

Հեռու, վսեմ լեռների մութ անձալներում կուսական
 իրենց կայտառ ձագերի հետ պերճ յեղնիկներ մահ յեկան։
 Ու սիգավետ յայլադներում կաթը վազեց ինչպես գետ,
 Մրցման յելավ իրա փայլով՝ թարմ կարագը վոսկու հետ։
 Լուրթ սարերի հովիկները՝ սրինգների պաղ շնչով
 Յեկան անցան յայլադների միջով անուշ կարկաչով։
 Ու յերբ բացվեց Միփան սարի արշալուսը բոցակեզ,
 Միամանթոն հեծավ իր ձին հավատարիմ, կուրծքը վետ
 Գլուխն առավ ու արշավեց դեպի քցեղը զոնկաց։
 Արևի պես շողողալով աշխույժ ձիուց իջավ ցած։
 Հյուր մնաց մի պառավի մոտ ու վարդավառ վաղ ծեզին
 Լսեց զուռնի չեղ դհուլի հունչն ու թինդը ցնձազին,
 Վոր ձորերն եր թնդացնում՝ ծովասարը բռնած վես,
 Միամանթոն ասաց Վամբիկ, այս ինչ ձայն է, վոր այնպես
 Թունդ է հանում ջահել հողիս և նժույզս այդ ձենից
 Մանձն է կրծում, վոնց կովի մեջ ընկածի ձին խոր քենից։
 Ու պառավը խոսեց հանդարտ, մի մարած փայլ աչքերում.—
 «Խճեղարեն և պսակլում, նրա հարսնառն և պարում։
 Յերեք գիշեր ու յերեք որ խնդությունն և թունդ առել,
 Բայց չգիտեմ Խճեղարեն Եր է հանգած մոմ դառել։
 Փնսան՝ Հարուն թագավորի յերկրից մի մարդ է դանդին,
 Ու մեր հողից եզուց գիշեր, կառնի մի բեռ թանկագին։
 Հայրը հարբել ու աղջկան հույս եր տալիս աչքը՝ փակ՝
 Աղջիկն եր մութ հոր գրկի մեջ, ինչպես արևն ամպի տակ։
 Միամանթոն խորհեց մի պահ և արցունքը աչքերին
 Ասավ Վամբիկ, մի նշան տար ինձնից այսօր իմ յարին։»

Յեզ հանկում իր մառանին, վոր վտիել էր յերազում,
Ասով ոչնա յեզ աւար նրան, գիտեմ, ինձ և սպասումս:

Պատափն ասով և մի նախշուն թաշկի՛նակով են անկուտ
Չամիչի մեջ՝ գրեց հովիթ լույս մատանին սիրազութ:

Յեզ աղջիկն ի տես զնաց, սիրով զնաց աչքալուս,
Պահած սրտու մ հաղթանակի աւաղանման մի վառ հույս:

Ձ

Խնկարեն յերբ սկսեց շամիչն հաս-հաս, լուս ուտել,
Հանկարծ նրա աչքին գիտավ այն մատանին զսկեկիւն:

Հիշե՛ց, հիշե՛ց, ուշքը զնաց աչքը մթնեց ամպի պես,
Յած գլորվեց հաւակն իրա, ինչպես ընկնող ծառը վես:

Յեզ հասաչեց ու լաց յեղավ, ինչպես աշնան քամին լուս,
Նորից նրա ուշքը զնաց գորգի վրա աստաղհուս:

Պատափն հուշիկ ձեռքը գրեց նրա կարոտ աչքերին,

Ու սարսափով բարձրացրեց ընկած գլուխն իր ձեռին:

— Ա՛խ, քոտանան թող իմ աչքեր, Խնկածքե, շունչ առ, տես,
Քեզ քնչ յեղավ, սխ, քնչ յեղավ, բաց շուրթերդ վարդի պեսս:

Ու պտտովի ձյունի պես պազ ձեռքը ճակտին յերբ քովեց,
Ջրից գարթնոզ մանուկի պես ուշքի յեղավ, արտասովեց:

Շուրջը նա յեց և բաց արավ բերանն ինչպես կռիւն վարդ,
Ասով սմամիկ, սեր և հիմի այս մատանու տերն հպարառ:

Յեզ մպխտը ձեր աչքերում պատափն ասով սիրով խոր,
Ե՛ւմ զոնախն և մի դեղեցիկ, մի հաղթանակն ձիւտոր:

Վոր իմացով քո հարսնասի քեֆի ձայնը մեծաշուք,
Հոնքերի տակ աչերն իրա գարծան մի լին արտասուքս:

Յեզ աղջիկը կարոտակեղ ընկալ գիրկը պառաւիլ,
 Յեզ արցունքով այսպես խոսեց իրա ձայնով կաքավիլ:
 «Մամիկ, այնտեղ իմ հարսնիքն է թնդում տխուր ինձ համարք:
 Զի մնացել ել ինձ միջոց, ունեմ մեկ որ ու մի ճար:
 Գնա, մամիկ, ասա նրան, խնկարեն քո սերից,
 Գո կարոտի են սուր բահով աղբյուր հանեց աչքերից:
 Ասա հիմի մնացել է մեկ որ միայն ու մի ճար.—
 Եզուց մորս գերեզմանին ուխտ եմ գնում դեպի սար:»
 Մենակ կերթամ, ասա թող դա, Միամանթոն իմ արի,
 Ու յետ խի սև-ազուովի ճանկերն ընկած իր լորին:
 Ասով տրտում խնկարեն ու մատանին ծոցն առալ,—
 Ապարանքում դեռ ղնգում եր հարսանիքը, ինչպես դա՞ք:

Ե

Միամանթոն լուրը լսեց ու վեր թռավ գիշերով—
 Յելավ դեմի զմրուխտ սարը նայեց քնատ աչքերով:—
 Տեսավ հեովում խրճիթները՝ թաղված քնի մշուշում,
 Շների թույլ հաջոցներով իրեն եյին դեռ հիշում:
 Ու ծովն հանդարտ աստղերն ամեն զրկած հսկա իր ծոցով
 Որորովում եր ալիքների անլսելի զնգոցով:
 Հեովից՝ բեկի ապարանքն եր անվերջ ցոլում ըոցալուս,
 Ներսում գինին թուռք եր հանել իշխանների սիրտը մատ:
 Յեզ վազուց եր խնկարեն հոր զրկի մեջ նվազում,
 Ինչպես վոսկի ձուկը՝ չորցած ավազի մեջ չի լողում:
 Իսկ հովտի մեջ գյուղակն իրենց լուռ է մտտիկ սարի ոլես,
 Յեզ հովիվը միտք եր անում է մտքերը արհկեղ

Քարվան զառանձ զնում եյին սազխի կարտաով
Տրորելով զաներ ու թագ սլանում եր խուլ թափով:
Յեւ աղջկա մոր հինասյուրց շիրմի վրա նստած լուռ,
Ստում եր իր սիրտ պես խոր յերկնքի հետ աստղակուս:
«Հէյ ջ ջան աստղեր, դուք յերկնքի սերն եք իրար փափառււմ,
Յեւ մի անասող յերկնքի պես իր աստղին եր սպասումս:
Հովն եր դալիս նրա հողնած աչքին փարվում համբույրով,
Ծագելնքի, շագիկնքի անմահական հերմ բույրով:
Շատ եր հողնած, Միամանթոն՝ ածնեակաւն իր հազով
Յեւ քուն մտով, ասես խմեց զինով լիքը յերեք գավ:
Յերազի մեջ ննկարեն մեռած մոր հետ յերևաց
Ու մայրն ասաց քրարի տղա, լույս աղջիկա քեզ մնաց:
Ա՛ռ դու նրան ու վարդի պես պոկվեք վշտա ձեր թփից—
Ու յերազում նրանց նախն եր փախչում կյանքի ակերից:

6

Յերբ սարերի զաներն արծաթ վոսկեջրվեց արևով,
Սնկարեն զնաց սարք հուր կարտաի լույս թեով:
Տեսով իր մոր շիրմաքարին լույս նակատով մի տղա,
Վորի պայծառ գեմքի վրա գեւ քունն անսուշ կմխա:
Սնկարեն հովվի քնած աչքն հուշիկ համբուրեց,
Ասես հովիկն անցով գետի ալիքներով մանրածեւ:
Միբով վառված կանգնեց անձն վոր սիրածը շարթնանա,
Բայց վրդովված լնի նման սիրաը ալիք կրանա:
Թե քինջու լիս քնել մենակ, անտես հո չնս, վոնց քամի,
Անմեղ գառի նման ունես հազար առյուծ թշնամի»:



Ասավ, խորհեց ու գրպանից հանեց վոսկի մի զույգ ճան
Յեւ վրեց ծոցն իր սիրածի, անհուն սիրով անվախճան:

Ու վոնց բույրն եւ անցնում բացվող կոկոն վարդից արնաթերթ
Խճեղարեն իջավ սարից, դադտնազողի մտավ բերդ:

Ու վաղորդյան շողը դեմքին, հոգին՝ լցված աստղերով—
Դեռ ննջում եր Սիամանթոն-յերկնքի պես լայն սիրով:

7

Յերբ իմաստուն ճամբորդի պես ըոնեց արեֆն իր ճամբանը:
Սիամանթոն աչքը բացեց ու չգտավ աղջկան:

Ու սիրաբեռ սրտի մակույնն ընկավ վշտի ծովն անհուն,
Իջավ սարից ու ձեռնուռնայն վորսկանի պես մտավ տուն:

«Մամիկ», ասավ, «Խճեղարեն չեկավ մթնով թե լուսով,
Գնեւ եյի, դարթեա՛ չկար ու մնացի քո հույսով:

Ու պառավը հոնքը շարժեց ասավ-«չատ ես միամիտ
Նա յեկել ե, նշան թողել, դու հարց արա գրպանիդ»:

Սիամանթոն հանկարծ ծոցից գտավ ճանհրն այն վոսկիս
«Ահա, կանչեց պառավն ուրախ, նշանը վատ իր խոսքի»:

«Դու տղա յես» այս ե ասում սիրտը սիրածդ աղջկա,
«Խակ ծիրան ե դեռ սիրտը քո, այսօրվա քունդ ե վկա,

«Գնա ու ճան խաղա դյուղում ընկերներով պատանի՛
«Դեռ մանուկ ես սիրո մարդ չես, քունն աչքերըդ թող տանի»:

Սիամանթոն շիկնեց ինչպես արեվահար մի խնձոր,

Ու թաց աչքով ժիր պառավից նորից խնդրեց գլխիկոր:

«Գնան մամիկ, վերջին անգամ, թող իր խոսքը տա վերջին»,
Տես կարոտով սպասում եմ քո տան դռան առաջին:

Ասա վաղուց ինչեւ և նա քո ուղարկած լուռ սարեն,
Ու կարտախզ են սուր բանով աղբյուր հաննց աշերհնէ:
— Եւ իր ինչ՞ու դու քննցիր: — ասով պատասխնու դանդաղ
Մի կույտ ներմակ ասպիւ յաման թողեց խընթին իրենց պաղ:

8

Կոյում հաղթող դիմովորի պես պատասխնու քաղա մտով տուն,
Տունը լցվեց անասկ լույսով, տունը դարձավ խնդուք յուն
— Ե՞նչ լուր, մամբիզ ասով ազան թողնելով ձին իր լեան,
— Եթե սեր ունես՝ մտ ձխուղ հետ Սիփան սարի արծաթի թե

Յնեկարեն ալսպես ասով, Ելեթե սիրտ մարդ և նա,
Թե ինձ նման ունի իրա սրտում սիրտ հուր անմահ, —
Եղուց յարին պիտի տանեն զորքով, զվարթ հանդեսով,
Թող գա հասնի ու շնա իմ աչքերից ինքը սով:

Իր նմուշը հեծնի ու գա՝ ձեռին բանուկ աղեղ, նետ,
Ու իմ նամբեն կարն անովախ, ինչպես զարնան յելման զետ:
Վոր յերբ հարնան անզգներ ի խմբի նման գա անցնի,
Ինքն արծաթի պես դարկե նրանց և ինձ առած փախցնի:

Ու միտայն հետու ներմակ կատարները բարձրանանք
Այս կրակից հետու, մեր բոց սիրտը սիրտ հովին տանք:
Յեղ գումանր ծածկե թող մեղ, ինչպես ցերեկն աստղերինէ:
Այսպես ասով Յնեկարեն քո ծով կարտուն աչքերին:

Ու սիրակեղ Սիամանթոն բունց ձեռքը պատավի,
Ասով՝ քամմիկ, քեղ անպակաս լինի թող լույսն արևին:
Յեղ նա յերեք մաքի նվեր ավեց նրան ու թափով
Իր ձին հեծավ կայծակի պես ու դուրս թափ կարտավ:

Յեզ պառավը յերեք մաքին գուրգուրանքով տուն տարավ,
Կապեց իր շար այծի կողքին, տունը կաթի ծով արավ:

Յ

Սարերի մեջ վոլոր-մոլոր կա մի ճամբա ոձաձև,
Վոր գնում ե գետի նման լեռներ թողնում իր յետև:

Նրա յեզրից մի վիթխարի ձոր և բացվում խոտավետ,
Ուր չորս գուղի նախիրներն են միշտ արածում իրար հետ:

Ճամբի վրա, լուսաբացին մի ձիավոր գինավառ
Սպասում եր ձիու վրա, բարձր ինչպես վսեմ ժայռ:

Դոգում եր ձին ու մերթ խաղում, ինչպես մարալ սարերի,
Ջրավորը մենակ ու լուռ սպասում եր մի բանի:—

Ջուռնաթաթախ կատարներին և իր ճամբին աչքն հառած՝
Միտք եր անում նա տխրադեմ հսկա կաղնու պես կանգնած:

— Ե՛վ ել լինի, թագավորից, թե իշխանից քաջազարմ,
Պետք ե այրեմ իմ կայծակով նրա մեջքի կաղնին թարմ:

Բայց ուժն հաղթող շատի մեջ է, և վոչ հսկա այն մեկի,
Չար աչքերը յես թաց կանեմ՝ վոսկեհամբավ այդ բեկի:»

Տեսավ հեռու ցից կատարից, լուռ ու հանդիստ թե առնում
Մի արծիվ եր առավոտյան բիլ յերկնքով սավառնում:

Կարծես նա յել հուր կարոտով սպասում եր մի բանի՝
Առնի հզոր իր թևերին՝ մինչև բույնը վեր տանի:

Սավառնում եր. մեկ ել դեմից մի խումբ անդդ թևարաց
Մի նախուռն ծիտ մեկի կտցին՝ փախցնում են, աչքը թաց:

Ջրավորի աչքը մթնեց, ուղեց մի նետ արձակել,
Բայց նա ժպտաց, յերբ բարձունքից այն արծիվը անարգել:

Սուրաց, զարկեց անդգներին, ու սիրուն ծիան աղաւթած
Արծըլի հետ թաւով գետի կատարներն իր յերազան:—

Ձիաժորի սիրտը բացվեց յերկնքի պես մի կապույտ
Յեզ նա ձիու բաշը մի պահ շոյեց սիրտով և անփուջի:

Հեռոյց դուրս յերևում եր ծովը փռված սարի տակ
Յեզ ձյունապատ դճրեթի պես Սիփան սարը սպիտակ:

Սպասում եր, հանկարծ մտտիկ ձորից ըսեց լաց ու կոծ,
Ծիչ, ազազակ, ու նա ձգեց ու ձին թաւով սանձակոծ:

Եւն, նրանք են, տուն են տանում ձիտակի բարձր ու կատաղի
Յեզ ձորն իջավ նման պարթև ժայռից պոկված հեղեղի:

Տեսով յերեք անգն շորան ու շորս գինջված ձիաժոր,
Եւն, ոչնեցեք, ձայն ավեցին նրանք ահա ձորից խոր:

Երազադներ են և ուղում են խնկ հտալ այս ձորում,
Ինձ ել ելին սրանք կրծում, աստով արշունն աչքերում:

Թաւով անկ զտղրի նման խկույն բռնեց յերեքին
Գեաին գրեց ու յերկուսին փակեց ջրի յեզերքին...

Հովիվները վրաս ավին, բայց այն կռփի փայլն առած՝
Շողջղում եր ձիաժորը ճակատն հպարտ, կուրծքը բաց:

Յերկու գաշող փախան անից՝ կորան սարի թիկունքում,
Յեզ ազատված հովիվները հեծվորին են որհնեցում:

— «Յերկնքը քեզ պայծառ լինի, ջրի պես հացը անպակաս,
Մեզ փրկեցիր, վողջ աշխարհին փրկուիլյան դուռ դու բանաս,

Յերեք գյուղի ազրտ մարդկանց վողխարն և սա՛ իմ ավալեր
Տանը մի այծ, մի գառ ունի, կամ թե յերկու մաքի ձեր:

Չաղաւորի ապրանք հո չի՛, ու շննք հիմի իմանում
 Թե այդ շնեբն ուր են ապրում, վոր սև սարի դումանում:

Վոչ սարերում ունենք հանգիստ, վոչ անճրադ մնը գեղում,
 Տերը՝ գել ե ու մենք՝ վոչխար, ասես լինենք դաղագում:

Ասավ հովիջն ու հեծվորին խնդրեց ձիուց իջնել վար,
 «Վճրտեղից ես, քեզ վճր արեն ուղարկեց մեզ վերկարար:»

Մի չար բեկի հարուստ հոտն ել յես եմ պահել սարերում,
 Գայլ ու դառ ենք դառել հիմա՝ իր աղջիկն եմ յես սիրում:

Սպասում եմ ճամբի վրա, պիտի անցնի այս ճամբով
 Իմ սիրածի հարսնաւն անեղ, սիրտս բռնե սև ամպով:

«Ով ել լինի, մենք քեզ հետ ենք ու շննք թողնի քեզ մենակ,
 Սարի հալը սարը գիտի այս յերկնքի աչքի տակ:

Մենք հովիվ ենք, հովվի հալը լույսի պես ենք իմանում,
 Լույսը վկա, մենք քեզ հետ ենք, այստեղ, ճամբի դարանում:

Իմացել ենք մենք քո մասին մի պառավից այնքան հեղ,
 Ասում եր թե, դեռ իմ տանը հյուր չեմ տեսել նրա պես:

Սիրտը՝ մաքուր սիրտ նման, լույսի նման արևի,
 Յերնեկ նրան, ով գեթ մի որ արժանանա բարեին:

Աղջիկն ել ե նրան սիրում, բեկն ե նրան վոնդել,
 Ու աղջիկը կարտաից ե դարձել մի խուրձ մանած թել:»

Սխամանթոն հիշեց բարի այն պառավին ու յարին
 Յեզ աչքերը բոցկլտացին, ինչպես փայլը աստղերի:

«Ո՛վ ել լինի, մենք քեզ հետ ենք ու շննք թողնի քեզ մենակ,
 Ու քո բախտին մենք ողնական՝ քեզ ենք մնում սարի տակ:»

Յեզ մի վոչխար գետին դարկին, կրակն հասավ յերկնքին:

Հայը կերավ Սիամանթոն, կանգնեց ճամբի յեղերքին
«Ով ել լինի, թագավորից, թե իշխանից քաջազարմ,—
Պիտի այր՛ւմ իմ կայծակով նրա մեջքի կազնին թարմ»

Յեզ նա կանգնած աղաւում եր ձիւս վրա հուր սիրով,
Հողին լցված կայծակնալից վրեժի մութ ամպերով:

Հանկարծ գեմից, դորքը ահա, գլուխն հանեց հաբսի հեա,
Սիամանթոն ձին խթանեց ու սրացավ ինչպես նետ:

Ինչպես ահեղ զանթն և մեկից պայթում գլխին անտառի,
Սիամանթոն թափով զարկեց ճակատներին ձիերի:

Խուճապն ընկավ ձիերի մեջ, դորքը թռավ գինազառ...
Խնկարեն տեսավ յարին «Սիամանթոն, կյանքս մտն:

Ձորից հասան հովիտները իրենց ահեղ շներով
Յեզ ազմուկով վրա ասին, քրտինք յերով ինչպես ծով:

Վորը՝ հեռվից, վորը՝ մոտից նրանց արին քար—հալած,
Ահա վերից կարկուտ թափվեց թե յերկաթի ծով-հալած:

Սիամանթոն հիշեց մաքում այն արձվին յերկնքի
Յեզ վառլ տատով վառլատակող, վառլող հրդեհը դեմքի:

Ու մի ձեռքով նա ազնկա մեջքից բռնեց և թռավ
Յերեք սրվա ճամբեն՝ մի սանձ, մի զարկ ու մի շունչ արավ:

Խերկորույս ձիավորներ՝ նրա հեռքով սրացան,
Սիամանթոն նրանց թուղեց յերկար ճամբեք ու կածան:

Թռչում էլին կայծեր գառած ձիերն ամեն սանձաթող՝
Իբար խփում յերկիր յերկինք, իբար խառնում ամպ ու հող:

Յեզ սուբում եր հողմի նման Սիամանթոն աննկուն
Իբ կարտաի հուրն հանգցնող վճիտ աղբյուրը զրկում:

Նա սարեր եր թողնում հետեվ, գյուղեր՝ ավեր ու կենդան,
Յեվ աչքը բաց արշավասույր դեմն անստույգ մի ճամբա:

Յեվ ինչ ագաւով պետք ե հասնի սուր բաղնի յետեվից,
Սիամանթոն քրտինք մտած յետեվ նայեց մի թեվից:

Տեսավ հեռու մշուշի մեջ ձիավորներն այն՝ թափով
Հա թռչում են, հոգ գալիս են՝ իրենց մեծի սարսափով:

Յեվ նրանցից առաջ անցած մի ձիավոր սղիտակ
Խեղճորույս գալիս ե զիլ իր մահն առած վտտքի տակ:

«Ո՞վ ե այն մեկն, ասավ խեղճ Սիամանթոն աղջկան
Ու ինչ ահեղ թափով ե նա թռչում առաջն իր մահվանս:

«Նա յե, վորից դու մի տարվա նշանածը խեցիր,
Սիրտն ե, այբովում, Սիամանթո, սիրո կրակն ե անծիրս:

Ասավ չքնաղ Խճեղարեն ձիու բաշը պինդ գրկեց,
Ապա դարձավ և խանդավառ յարի աչերն համբուրեց:

«Թող սպանեմ, Խճեղարե, թող քամուն տամ յես գրան,
Ու ապահով սարի դռշին դարկեմ ուրախ մի վրանս:

«Սիամանթոն, մի սպանի, չի՞ վոր նա քո սիրածին
Փայփայել ե իրա սրտում ու չի յեղել մտքով ցին:

Սերն ե նրան սարեր դցնել՝ դուլխն արել գիշեր մութ,
Մի սպանի, թե՛ վոր ունես դու քո սրտում սեր և գութ»:

Սիամանթոն ժողտաց ու ձին դիլ խթանեց ու թռավ
Յեվ մի ամպի սավերի պես դաշտն իր շուքի տակ առավ:

«Յես յսպանեմ, ինքը պիտի դորքով հասնի սպանի՝
Ու նենգ թրով նա իմ կրծքից սիրող սիրտս դուրս հանի»:

Մասձեցոյ Սխամանթոն հասալ ըստն մի լանջի,
 Գեախն գրեց հուր աջդկան, տակը փռեց յափնջին:

Ինքը աննայն իշալ սարից ու սլացալ նորից հետ՝
 Հասալ թափոլ ե թշնամու ճամբին հանդնեց վանց մի բերդ:

Զբախորններն իրար անցան, Սխամանթոն խելազար
 Առյուծի պես նրանց մեկ մեկ դեռին զարկնց, ինչպես գառ:

Քսան գլուխ նետոյ խլնց, նետերն հատան հապարճում,
 Յեղ սկոյից թուրը շոգալ—կտիվն անեղ եր շաշում:

Նրանց անեղ ու տաք կողից, նրանց շնչից արեվկեղ՝
 Բոցալասովեց, հնոց դարձալ ջրջնագատի ողն ասես:

Յեղ ալլ ողում նրանց արծաթ թրերն ամեն հարկնցին,
 Միայն կտթերը փոստկըյա ձեռների մեջ մնացին:

Աւ հասաղի վերջին շնչոյ նվաստ գորքը թշնամի
 Մի անգամ ել վաճառց, ինչպես բերդի հանդեպ մի քամի:

Սխամանթան վաղջը վշրնց, կարմիր փռեց իր ճամբին,
 Զին խթանեց հասալ սարը ու ցած թառալ իր թամբից:

Խնկարեն գրկեց նրան, տասլ՝ «ձեռ ես, անուշ, ձեռ»:
 Պասասխանեց՝ «կյանքիդ համար նրանց արև յես փրփուր»:

Մի ձոյ ճամբա կորի յեկա, թուրս հաղթի նոր պազալ,
 Բայց թո՛ աչքից դողի նման սև ձիալոր մի փախալ:

«Գնանք, տասլ Խնկարեն, «կորչենք Սիփան սարի տակ,
 Գիտեմ հայրս հիմի կղա քս դեմ հանած կուռ բանակ»:

Սխամանթոն նայեց նրան, ասես հարկնց յերեսին,—
 Աւ ձին հեծած թաան դեպի Սիփան սարը միտախն:

Յերբ Սիփանից նոր եր նայում առավտալ լուսարուխ,
Մի վիթխարի սեւ ձիավոր քառատրոփ մտալ գյուղ:

Աղբյուրի մոտ, միտքը լարած, լսեց զաֆի դրմբոց,
Գնաց մոտիկ տեսալ և իր աչքից թռալ մի հուր ըոց:

Գյուղի ջահել հարս ու աղջիկ յերգում էյին և պարում,
«Սիամանթոն մուրազն առալ, կայծակ դառալ ամպերում»:

Նրանց պարն եր ուրախ դառնում ծաղիկների ծովի մեջ,
Միածանի տակ սավառնող հանց աղալնու խումբը պերճ:

Ծեր հովիվներն իրար նայում, պարում էյին ծիծաղլոտ,
Սիամանթոն ասես կանգնած յերգ եր ասում նրանց մոտ:

Աղջիկները ծիածանի յոթ դույներով զարդարված,
Պարում էյին, յերգում ուրախ, հովին փաբլում կրծքաբաց:

— Ե՞րբուխա սարից հովեր կուզան,

Աղբյուրների ծովեր կուզան,

Սըտիդ նետն եզիպել այսոր

Քրդի սիրուն սև աղջկան:

Սարի վարդ ե, փուշը լինի,

Յես ծառ, ինքը նուշը լինի,

Միրել եմ յես թեկուզ խանի

Սրտում փակված զուշը լինի:

Բուլը չինար՝ մարտլի պես,

Ջուխտ հոնքերը խանչալի պես,

Աչքերի մեջ զուլալ յերկինք

Միրտը սիրով՝ լեն կալի պես:

Մեր սարերից հովեր կուզան,

Աղբյուրների ծովեր կուզան,

Քարթլեցիներից կարթը բանեց
Քրդի սիրուն սև աղջկանք:

Երբդու՛մ ելին աղջիկները, նրանց կրծքին անաղարտ
Զնդու՛մ ելին ու շողշողում արծաթաձույլ անթիվ զարդ:
...Սեղ—ձիավորն հասավ, գոռաց, պարը ցրվեց ձայնի հետ,
Սաննը ձգեց ու սարսուռով գնաց, ախուր մտավ բերդ:
Լուս եր բերդը՝ հավերժանիստ ամպը գլխին սաբի պես,
Ու ամպի պես բեկը մենակ նարդիլեն եր քաշում հեղ:
Հենց զոր տեսավ ձիավորին, նա ակնապիչ հարց արավ
Քե սինչ՞ա յես գերադարձել, բեկն աղջկա ս՛ւր տարավ:Ճ:
«Միամանթոն կարեց հարսնաձն ու փախցրեց աղջկադ,
Արյունն հանեց գետի նման, քո հովիվը այն նամարդա:
Ասավ ահավ սև ձիավորն ու լուս թիկնեց մի բարձի,
«Մենակ յես եմ պրծել սրից, մեկ ել ահա իմ սև ձին»...
Հայրը յելավ գողգողարով, գույնը զցեց, վոնց կտավ
Ու հասաչեց, թահա թե ինչ ձեռով լեցվեց սիրտս ցավ:Ճ:
«Ի՛մ աղջիկը, հորը խորեց թափեց կրակն իմ հոգու,
Վերջը պիտի չորանները փչրեն աշխարհն ահարկու:Ճ:
Ու մանչաց՝ թանթիվ գյուղեր ճարակ լինեն թող մահին,
Վար ել այսպես թող չնստի արեգական իմ գահին:
Ով զոր բերի ավազակին, գիչեր լինի, թե ցերեկ,
Նրան գեղին զոսկի կտամ բերած գլխի քաշով մեկ:
Իսկ կենդանի յեթե բերի իմ աչքի ծուխ աղջկան,
Հենց նույն ժամին կիջնամ բերդից, տաս գյուղ կտամ յես
նրան»:
Ասավ հայրը, սև ձիավորն սասավ իր հետ յերկու մարդ

Ու ձիերը թռան դեպի ճերմակ սարի դռն հպարտ:
Բնկի գլխին ասես նստեց ավերասեր բուն ախուր,
Ու դառամյալ հողու վրա՝ յերկար կանչեց «ճւր ե, ճւր»...

21

Արեգակի վերջին վարդը թռչնեց լեռան գագաթին,
Արար աշխարհ՝ սուղվեց դանդաղ մշուշների մեջ մթին:
Հեռու հեռվում, սարի լանջով նժույգ ձիով անվեհեր
Միամանթոն սիրածն առած յնչով Սլավոն սարն ի վեր:
— Միամանթն, իմ աչքի լուս, իմ կյանքի տեր արեգակ:
— Խճեզարն, իմ հուր տանջանք, իմ կարոտի լույս վտակ:
Ասին, անհաղ համբուրվեցին ու սեր տվին մեկ մեկու,
Ժայռերի մեջ, ուր չի մտնի անգամ վարազն անարկու:
Միամանթոն նայեց ձիուն, սանձը կապեց մի քարի,
Ջին նրանց մոտ սլառկեց մեջքին, ինչպես մարալ սարերի:
Հովերն անուշ են հաղարան ծաղիկները փունջ արած
Նրանց դեմքին շնորհգալով մտան սրտերն այրելու:
Խճեզարն յարի համար սեղան բացեց գիշերով,
Ու խմեցին լուսնի կաթը, լուսնի մարմար կժերով:
Սարի գիշեր, սիրո գիշեր՝ աստղաշարը ճակատին,—
Մուրազն առած, յերազն առած՝ հանդան սարի գագաթին:

22

Աղոթրանին սարում վոչ մի վայրի աքլոր չկանչեց,
Միայն մասրի թփի տակից մի ժիր արտուտ վեր ճախրեց:
Ու վաղորդյան քամին յերբ վոթ մտավ ծոցիկն աղջկա,
Ջարթնեց սե-աչ Խճեզարն կանգնեց ժայռին մոտակա:

Քնամթաթախ աշխիճները նման է յին ցաղով լի՝
ճաղիկներին, վոր նայում են հուր արեւիին անձկալի:

Ու աղբիկը նայեց դարձնող հով աշխարհին բովանդակ,
Վոր հինգութուրց գլուղի նման մեղմ ձխում եր վտաքի տակ:

Հեռու խաղաղ ձովի վրա խուչ յերդում եր մի կարապ
Յեւ թալիս եր գեփյուռի պես ձայնը տխուր յելած ափ:

Խնկոտրեն լսեց յերգը, արցունքի զողն աչքերին
Ինքն էլ յերգեց կարապի պես ասես կանչեց իր յարին:

—Ա՛խ, յես ինչ անեմ,
Ի՞մ սիրան ե պզտոր,
Մարես վո՛նց հանեմ
Չար աչքերն իմ հոր:

Յեղնիկ եմ մենակ
Քնած ե յարս,
Յեք ձււմ գլխի տակ
Վար գնեմ քարս:

Սիփան սալերի
Արեն ե ազատ,
Դուչմանն իմ յարի՝
Հերս ե հարազատ:

Ճակատն ե ստամփ
Մարում քնածի,
Աչքիս լույսն հատալ—
Ենքան նայեցի:

Նայեմ յերկնքին
Հողիս ե ամպում,

Մեր յեկած ճամբին
Զիեր են թամբում:

Ասավ, նայեց Սիրփան սարի կատարներին յերկնամաս
Ապա նրա հայացքն ընկավ մոտիկ ձորը դեռ ամպուտ:

Հանկարծ տեսավ մի անավոր և արյունոտ տեսարան,—
Ձորի յեզրին, աղբյուրի մոտ և նա ճշաց մի բերան:

Արցունքն աչքին՝ ժայռից իջավ ու մոտ դնաց սեզ յարին:
Վորն անվրդով ննջում եր դեռ նման Սիրփան կատարին:

Խճեղարեն գաղտնազողի լաց եր լինում սրտարուխ,
Լողում եյին արցունքի մեջ թարթիչները նրա թուխ:

Հանկարծ նրա խոշոր աչքից արցունքի ջերմ մի կաթիլ
Ընկավ քնած յարի դեմքին ու նա զարթնեց խնդազին:

Երնչ պատահեց, Խճեղարեն, դունատված ես յերեմում,
Ասա, ինչու դողում ես դու և ինչու յես արտասուումս:

Ասավ, փարվեց նրա կրծքին Սիամանթոն ակնապիլ,
Կուրծքն եր փափուկ ինչպես գարնան ծաղկած սարի լանջ
Թավիչ:

«Սիրտս պաղեց, յերբ վոր տեսա դեմից յեկան ազմուկով
Այն աղբյուրից ջուր խմելու՝ քառասուն ցուլ և մի կով:

Ջուր խմեցին և ջրի մոտ կովի համար իրար հետ
Կախվ բացին ցուլերն ամեն, պողերն եյին ինչպես նետ:

Յեվ նրանցից միայն մեկը՝ տղեղ մի ցուլ սպիտակ,
Ջարկեց, հաղթեց ընկերներին կովին առավ աչքի տակ:

Ու կովի հետ նորից դուլալ ջուր խմեցին աղբյուրից
Ու շտեսա ել ինչ յեղավ... արցունք ընկավ իմ աչքից:

Քեզ հիշեցի, Սիրամանթո, և մեր սիրո կյանքը վառ,
Յեւ հիշեցի քո սպանած կարիճներին, քաջարար:

Ասով չքնաց Խճեղօտն, Սիրամանթոն անհամբեր
Պատանոս պէս, գննօտն ուսին, իջավ ձորը անվեհեր:

Նրան թվաց թէ սպիտակ ցուլն հեծովորն եր սպիտակ,
Վորին յերեկ մի հարվածով մոխիր դարձուց վտաքի տակ:

Ու տեսնելով նա սպիտակ ցուլին կանգնած կողի հետ,
Արտուս սիրո բոցը փոխվեց, խոլ վրեժի գարձավ դետ:

Յեւ սրածայր նետը գլխին այնպես խփեց թափով թունդ-
Վոր ցուլն անկո բառաշյուռնով ընկավ մթին մի անդուռ:

Սիրամանթոն դամեն գոտուց հանեց խակույն, իջավ ցած,
Վոր ձորի մեջ կրակ վառե, յարին տանի խորոված:

Մինչ մերձիմա՛ն ցուլը վերջին շնչով դողաց կատաղի,
Կեռ թրի պէս յեղջուրն հանկարծ սիրտը խրեց են աղի:

Սիրամանթոն մեջքի վրա ընկավ ժայռի սուր ծայրին՝
Կրծքի ժայղից սղորչուր լելավ ու տարածվեց քարերին:

Յեւ աչքերը անդնդից վեր՝ նայեց վերջին իր բոցով,
Յերկու ահեղ ախոյանի կանգնեց արյուռնն ինչպես ծով:

Խճեղօտն սրան անհանդիստ սև քարափից սահեց վար,
Տեսավ վայրի ցուլը դարկված աչքը դարձավ ծով խավար:

Ժայռի տակից ասես լսեց խոր մի անքոց և աղի
Դիակի մոտ սեսավ արնոտ դանակն ու թեփն աղեղի:

Յեւ նա լացեց ու մղկտաց, գոռոցն ընկավ սար ու ձոր,
«Սիրամանթո, ձեր գնացիր, ձեր և պատկել վիրավոր:

«Սիրամանթո՛, քո նեան եր կուտ, քո վահանն եր արծաթի,
Սիրամանթո՛, նման եյիր լեռան կանաչ գաղաթի:

Միամանթճ, ինչու ցուլի առջիվ յեւար դու մենակ
 Մերդ սրօիս մեջը դառաւ ամուր խրված մի դանակ։
 Միամանթճ, ախ մի աքա, մի հառաչե ձորի մեջը։
 «Քճեղարե՛, լաց մի լինի, ձենդ նետ և սրտիս մեջը։
 «Խճրն և վերքդ, խոր կտնքաս, ինչպես կանգնեն աչերն իմ,
 Միամանթճ, մի հառաչե, Միամանթճ, կմեռնիմ։
 Միամանթճ, դու իմացար թե այդ ցուլը սպիտակ,—
 Այն սպիտակ ձիալորն եր, վոր հող արիւր վոտքիդ տակ։
 Ո՛վ և լսել զարկված վորսը յետ վորսիանին սպանե,
 Ո՛վ և լսել ցուլը, սիրած սրտից սերը դուրս հանե։
 Վայրի ցուլը, վայրի ցուլը, տհալոր եր ու անգութ,
 Վայրի ցուլը մուրազն առած արևս արալ գլխիս մութ։
 Միփան սարեր մշուշ հողան իմ սև ու քար սրտի պես,
 Իմ սրտի սեւ գարերի մեջ լորի պես եմ պահել քեզ։
 Միփան սարի դողը սրտիս նման հազալ չոր մացառ,
 Զորի քամին մահաբեր և, սիրտս մտալ քամին սառ։
 Միամանթճ, ինձ ճամբա տուր, կարոտ ճամբա քեզ գալու,
 Ճամբա ցույց տուր յես դամ քեզ հետ չար աշխարհին կյանք
 տալու։
 Զովեր, ջրեր վոտքի յելեք մեզ թաղեցեք իրար հետ։
 Ասով աղջիկն ու աչքը խուփ նետվեց ձորը արնաներկ։
 Յեւ հառաչեց վերջին անգամ հուր շուրթներովն իր արնաս,
 «Միամանթճ»,— և լուռ հանգան յերկու դիակ իրար մաս։
 Մվսվոցով հովն հեծեծեց ասես շունչն եր տղայի
 «Քճեղարե՛»,— ու հավիտյան լռեց անգունդն ամայի։

Մտթը գանդադ, միտպազադ իջալ ձածկեց ծով ու հող,
 Կուլ գնացին հեռու մեզոս. մ հատարները ձյունաշող:

Սեղ ձիալօրն անեղ թափով քչում եր ձին բաց դաշտում
 (Ջուր եր գասեղ՝ բեղի վոսկու ձայնը մաքի յերաշտում):

Ընկերներին ուրիշ անմբով եր նա գաղանի ուղարկել,
 Ինքը Սիփան սարը տանող քարտա անմրեն եր ընկել:

Ու թռչում եր սև հավքի պես սեղ ձին բռնած մի կածան
 Կոր եր յելել կիտարուսինն, ինչպես վոքրիկ ձիածան,

Հեռում՝ ամպերն իրար վրա ընոների պես կուտակվել,
 Չեք յերեվում նրանց վրա լուսնից լույսի վոչ մի թեք:

«Անա աշտեղ Սխամանթոն իջալ ձիուց խմեց ջուր,
 Այս քարի սոս նա սպանեց... ահա և մի կուտած սուր:

«Այս ճամբով ե նա ձին քշել, ձորն ե մտել յերեվի,
Պիտի գտնեմ դանգը նրա մինչեմ ծագումն արեվի»:

Մտածում եր, ասպատակում, թռչում թափով ակնդետ,
Հանկարծ հեռվում մի սեմ քարից նրան դիպավ մի լույս կետ:

«Ավագմին ե կրակ վառել» — միտք եր անում նա անով,
(Բայց ծեր բեկի խոստումը միշտ սիրտն եր պահում ապահով):

Գնաց թափով, հասավ լույսին՝ յեզրի վրա անդընդի
Լուսնի լույսով մի դանակ եր ցոլում նման մարգարտի:

Դանակն առավ ու միտք արավ ճով ե անցել ետեղով,
Յեզ ե մորթել ու քարերը ներկել արյան հեղեղով»:

Ու նա ձիուց իջավ նորից նայեց քարին մոտակա
Յեմ դանակը ծոցը դրեց վորպես անխոս մի վկա:

Ահը սրտում, ազվեսի պես՝ վորն ուզում ե մտնել գյուղ,
Ձորի շուրջը ման եր գալիս սրտում տազնապ ու յերկյուղ:

«Զլինի՞ թե ձորում լինեն ու ինձ հանկարծ նկատեն,
Թե վոր տեսնեն կրծքիս վահանն հուր նետերով կպատեն»:

Մտածելով նա մոտեցավ ու կռացավ ձորափին,
Լուսնի լույսով տեսավ ազոտ ժայռերի մեջ նրանց դին:

Իջավ ձորը նա սիրտ առած, բայց վախեցավ մոտենալ,
Նրան թվաց թե գալիս են դեմից մթին մի խումբ գայլ:

Հիշեց բեկի խոստումը վառ, ու կռացավ նա գետին
Միտքը դողաց, յերբ վոր ձեռքը դիպավ մեկի հակատին:

«Թողեց բեկի վոսկի տունը, չորանի հետ մահ առավ,
«Բայց իմացմով, վոր իր մահով սիրտս վոսկու փայլ դառավ»:

Ասավ, հանեց նա աղջկա խաս չորերը դիակից՝

Յերկու չքնադողլուխ ձեռն վեր բարձրացավ անդնդից,
էթև հանդիպեն, կասեմ հազար սարեր անցած ու դատ,
Յեմ ձեր բեկը յերկու գլխի քաշով վտակին ինձ կտա՞:
Մտածելով հեծով իր ձին և աղջկա շորերով
Նա փաթաթեց գլուխները ու սլացավ անվրդով:
Չեր էլ նայում ճամբին իրա, խթանում էր սև ձիուն,
Թեմ էր տախտ նրան տակ վռակու փայլը շառագույն:
Ու թռչում էր սև նժույզը անձեն տանում իր մեջքին
Արձաթաթախ յերկու գլուխ և վռակեակնչ հեծվորին:

3

Լուսարացին սեմ ձիավորն ուրախ գնաց բեկի մոտ,
է՛՛հա յերկու ծաղիկների գլուխները դեռ արնոտ:
Ասով հանեց, յերկու գլուխ գրեց հալա սեղանին,
Սրամանթան, աչքերը փակ, կարծես ասում էր բեկին:
է՛նձ սարերից ցած բերելով սիրտն հանեցիր աղջկադ,
Մեր արյունից բանեն պիտի ձորի գոչին հազար վարդ:
Ու որերի արդար քամին շուտով ուրախ կպուկի
Հողի վրա ըսնած կյանքիդ անշող տերեն արնածին:
Յեմ աշխարհը պիտի մ'նա չորաններին սիրավառ:
Խնկարեն լուռ նայում էր ինչպես սմպի մի պատառ:
Նրա թուխ—թուխ թարթիչները փոված անշող աչքերին՝
Նման էյին վտանահարված ծաղիկների թերթերին:
Հայրը տեսավ իր աղջկան, ստեած գլուխն համբուրեց,
Մեր աչքերից արշունքների հազար ուլունք գլորվեց:

Մի քաբ դարձաւ նրա լողորը սրտի վրա ալեզարդ,
 «Դժւ կտրեցիր իմ աղջկա գլուխն, ինչպես թփից վարդ:

«Ինչ՞նչ պոկիր, ինչ՞նչ բերիր, սիրաս արիւր վշտի ծով»:
 Ու ձեր բեկը գոռաց, կողքից դաշույնն հանեց զնպոցով:

Յեւ կատաղի մի հարվածով վար տասպալեց իր բերդում՝
 Սեւ ձիավորն ընկավ՝ բեկի աչքը վտակու պես սրտում:

Նրա կուրծքը յերկու անգամ հեղաց վերջին իր շնչով
 Իր արյան մեջ սողաց մի պահ, սպա դարձավ դիակ չոր:

Մոայլ հայրը խնրակորույս գրկեց գլուխն աղջկա՝
 «Քճեղարն, էլ ինձ համար արեգական լույս չկա»:

«Քճեղարն, բաց աչքերդ Սիամանթոն և կանչում,
 Խճեղարն»—գրկած գլուխն անգոր հայուն եր հառաչում:

Համբուրում եր հանգած աչքերն ու ճակատը նրա պաղ,
 Դողդողացող ջրթունքները դարձան վարդեր արնաշաղ—

Լողանալով հեզ աղջկա գլխից թափված արյան մեջ,—
 Յեւ հոր սիրտը կրակ դառավ, դանակ գառավ, կրծքի մեջ—

Յեւ խնդար ձերուկն ահեղ հեծավ նժույզն իր ճերմակ
 Յեւ գորքովը իր դինավառ՝ գյուղերն արավ վտանատակ:

Գնաց թափով և տառավի դուռը կանգնեց ամպի պես
 Վորի մոտ եր զոնախ յեկել Սիամանթոն սիրակեզ:

Խոտի դեպի առջեւ կանգնած տեսավ յերեք իր մաքրին
 Ու պառավին դուրս կանչելով նրան նայեց մոլեգին:

«Սիամանթոն քեզ գիշերով յերբ զոնախ եր մնացել,
 Ինչ՞նչ դու ինձ չեյիր հայտնում, ինչ՞նչ էյիր դուռ բացել:

Ասա, ինչ՞աւ դու մատանին զաղտնի տվիր աղջկասս...
Ասով բեկը յեղ մտքակեց, պառավն ընկավ, արավ լաց՝
«Քեզ թվ տվեց վոչխարներն իմ, Սիամանթոն... քաջածին»...
Ու պառավի գլխի մազը ձիու պոչից կապեցին։
Ձին սլացավ, սարերն ընկավ ու յերբ հողնած յեկավ յետ՝
Բերեց միայն հեղ պառավի ներմակ մազը պոչի հետ։
Ու ձեր բեկը աչքերն հառած թռչող ձիու ականջին՝
Թաավ դնաց, ում հանդիպեց զարկեց, արավ ընաջինջ։
Յերեկոյան իր գինավառ զորքը սարից հորդեց վաը
Առաջն առած նախիրների խուռն ու չփոթ մի ավար։
Ուր ոջախ եր բեկը տեսնում՝ հանդցնում եր, հաղթ ու վեհ,
Սլանում եր, իր հետեւից թողնում ավեր ու հրդեհ։
Մխում եյին մայրերի մեջ խրճիթները մութն ու փակ,
Ասես այնտեղ ել չեր փայլում ջահել աչքի մի ճրագ։
Մահախուճապ յեղնիկներու նման հարսներն առանց քող
Մարերն եյին փախել իրենց մանուկներով կաթնաթող։

ՎԵՐՁԵՐԳԱՆՔ

... Իսկ այն ձորում ամեն տարի, ամեն բացվող գարնան հետ
Յերկու ծաղիկ են բարձրանում յերկու կակաչ բուրավետ:

Յեվ այնքան են իբար նման ծաղիկները, ինչպես վառ
Աչքը աչքին, սիրտը սրտին, սերը սիրուն ըոցավառ:

Այդ ծաղիկներն հրատուչոր ասես աչքերն են նրանց,
Վոր միշտ նայում են անդընդից կյանքի վրա սրտաբաց:



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0394726

47201 n. (204-)

26
118

Dr. Ширал
СИМАНТО и ХДЖЕЗАРЕ
ГЛАВА СЕР АЛЕКСАНДР ПРИБЛИЖИТЕЛНО 1937